# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/4Ծ-1

25.12.2020թ. կնքված N ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/4Ծ պետական գնման պայմանագրի

ք. Երևան «17» 02 2021 թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բաղիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Չունգուրյանի, որը գործում է «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 25.12.2020թ. կնքված N ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/4Ծ պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշումը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 08.02.2021թ. թիվ 07-Լ հրամանը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. *Համաձայնագրի առարկան*

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել Համաձայնագրի Գնման ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

1.2 Հաստատել Համաձայնագրի Վճարման ժամանակացույցը համաձայն հավելված 2-ի:

## 2. *Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

## 3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | <<Աստղիկ Գրատուն>> ՍՊԸ |
| ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, | ք. Երևան Գ. Քոչար 21 |
| ՀՀ կենտրոնական գանձապետարան | «Կոնվերսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011018513 | Հ/Հ 1930065750990100 |
| ՀՎՀՀ 02815457 | ՀՎՀՀ 01505177 |
| գլխավոր քարտուղար | Տնօրեն Ս. Չունգուրյան |
| Հ. Բաղիկյան | |
| ստորագրություն | ստորագրություն |
| Կ.Տ. | |

*Հաստատված է*
*N ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/ԳԾ գնման պայմանագրի*
*« 17 » 02 2021 թ. կնքված*
*Թիվ ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/ԳԾ-1 Համաձայնագրով*
*Հավելված N 1*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 79821200/558 | Ստորև | դրամ | 3 744 000 | 1 | ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3 | Սույն համաձայնագրին ուժի մեջ մտնելուց հետո՝ 1-ին խմբաքանակ՝ 200000 հատ – 30 օրացուցային օրվա ընթացքում, 2-րդ խմբաքանակ՝ 200000 հատ – 80 օրացուցային օրվա ընթացքում, 3-րդ խմբաքանակ՝ 400000 հատ – 150 օրացուցային օրվա ընթացքում: |

*Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

Չափաբաժին 1՝ համայնքների ֆիզիկական անձանց անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի վճարումների ընդունման անդորրագրերի տպագրման ծառայություններ
Քանակը՝ 800000 հատ:

Տպագրությունը՝ իրականացվում է օֆսեթ եղանակով, միակողմանի, մեկ գույնով:

Նյութերի տեսակը. միջուկը՝ օֆսեթ տեսակի թուղթ 60x84 1/8 չափի, խտությունը 70 գր/ք-մ, անթափանցելիությունը՝ ոչ պակաս 75% (ISO), սպիտակությունը՝ ոչ պակաս 85% (CIE):

Կազմարարական աշխատանքներ՝ գիրք-ալբոմի տեսքով 50 թերթ, կազմի վրա պետք է լինի տպագրված «Անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի անդորրագիր» անվանումը:

Կազմը՝ առաջին և վերջին թերթերը 150 գր/ք.մ օֆսեթ թուղթ, առաջին էջը միակողմանի օֆսեթ տպագրությամբ, մեջքամասը՝ բուկլինկով սոսնձված:

Անդորրագրի համարակալումը նախատեսված տեղերում (աջ և ձախ մասերում) նույն համարներով: Համարակալումը պետք է տպված լինի թվային կամ այլ բարձր որակի եղանակով: Համարակալումը սկսվում է և ավարտվում ՝ (10000001-10800000):

Կազմարարությունը՝ մետաղակար և սոսնձված:

Փաթեթավորումը՝ 20 գիրք-ալբոմներ հերթականությամբ մեկ փաթեթի մեջ դասավորված՝ յուրաքանչյուր գիրք-ալբոմում 50 հատ անդորրագիր՝ բաժանարար գծի (պերֆորացիոն գիծ) առկայությամբ: Մեկ փաթեթում ընդամենը 1000 հատ անդորրագիր՝ հերթականությամբ համարակալված), համարակալումը նշագրված յուրաքանչյուր փաթեթի վրա:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 08.02.2021թ. թիվ 07-Լ «Ֆիզիկական անձանց անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի վճարումների ընդունման անդորրագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» հրամանի (հավելված):

**Գնման առարկայի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Կատարողը:*

*** Հաղթող մասնակցին կտրամադրվեն անդորրագրի նմուշները:*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br>ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,<br>ՀՀ կենտրոնական գանձապետարան<br>Հ/Հ 900011018513<br>ՀՎՀՀ 02815457<br>գլխավոր քարտուղար<br>Հ. Պապիկյան<br>---------------------------<br>ստորագրություն<br>Կ.Տ. | <<Աստղիկ Գրատուն>> ՍՊԸ<br>ք. Երևան Գ. Քոչար 21<br>«Կոնվերսբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1930065750990100<br>ՀՎՀՀ 01505177<br>Տնօրեն Ս. Չունգուրյան<br>---------------------------<br>ստորագրություն<br>Կ.Տ. |

*Հավելված է*
*N ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/40 գնման պայմանագրի*
*«17» 02 2021 թ. կնքված*
*Թիվ ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/40-1 Համաձայնագրով*
*Հավելված N 2*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79821200/558 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն | - | - | 936 000 | 1 872 000 | 1 872 000 | 1 872 000 | 3 744 000 | 3 744 000 | 3 744 000 | 3 744 000 | 3 744 000 | 3 744 000 | 3 744 000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011018513
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Հ. Բ[illegible]յան

---------------------------
ստորագրություն
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Աստղիկ Գրատուն>> ՍՊԸ
ք. Երևան Գ. Քոչար 21
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930065750990100
ՀՎՀՀ 01505177
Տնօրեն Ա. Զունգուրյան

---------------------------
ստորագրություն
Կ.Տ